# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*« 11 » հուլիս 2016 թվականի թիվ 13*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 11 ՀՈՒԼԻՍԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

*Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետով .*

*համայնքի ավագանին որոշում է .*

հաստատել Դվին համայնքի 11 հուլիսի 2016 թվականի թիվ 6 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *Կողմ՝* | *Դեմ՝* | *Ձեռնպահ՝* |
|---|---|---|---|
| Ա.Գրիգորյան | | | |
| Կ.Դավթյան | | | |
| Գ.Դերմոյան | | | |
| Գ.Բարեղամյան | | | |
| Ա.Ատոյան | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

*Համայնքի ղեկավար ՝ Ա.Աբրահամյան*

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի*
*Դվին համայնքի ավագանու*
*2016 թվականի հուլիսի 11-ի*
*թիվ 13 որոշման*

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի ԹԻՎ 6-ՐԴ ՆԻՍՏԻ

. ԴՎԻՆ ՀԱՄԱՅՔՆԻ՝ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

*Զեկ. `Ա. Աբրահամյան*

. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐ
ՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

*Զեկ. `Ա. Աբրահամյան*

. ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ ԱՄՍՈՎ /ՕԳՈՍՏՈՍ/ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

*Զեկ. `Ա. Աբրահամյան*

. ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ՝ 0.05443 ՀԱ /03-040-0209-0008/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Զեկ. `Ա. Աբրահամյան*

. "ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ" ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ԿՐՃԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ 24
ՈՒՆԻՍԻ ԹԻՎ 12 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Զեկ. `Ա. Աբրահամյան*

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

*« 11 » հուլիս 2016 թվականի N 14-Ն*

## *ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ՝ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով.*

*համայնքի ավագանին որոշում է.*

Համայնքի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Բյուջեի ֆոնդային մասի եկամուտները /համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման գումար, հաշվեհամար 900415182113/, ավելացնել 3 100 000 /երեք միլիոն հարյուր հազար/ դրամի չափով:
2. Բյուջեի ծախսային մասը 3 100 000 /երեք միլիոն հարյուր հազար/ դրամը ավելացնել բյուջեի 01.01.01.51 բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման /կառավարման մարմնի պահպանում/ 5113 նոր բացված հոդվածի վրա:
3. Բյուջեի՝ 01.06.06.55 բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման /գույքի նկատմամբ իրավունքների գրանցման տեղ. տրամադրման հետ./ 5133 հոդվածից

    3.1 3 915 302 /երեք միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար երեք հարյուր երկու/ դրամը տեղափոխել բյուջեի՝ 01.01.01.51 բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման /կառավարման մարմնի պահպանում / 5113 հոդվածի վրա:

    3.2 1 000 000 /մեկ միլիոն / դրամը տեղափոխել բյուջեի՝ 01.01.01.51 բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման /կառավարման մարմնի պահպանում/ 5129 հոդվածի վրա:

    3.3 350 000 /երեք հարյուր հիսուն հազար/ դրամը տեղափոխել բյուջեի՝ 01.01.01.51 բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման /կառավարման մարմնի պահպանում/ 5134 հոդվածի վրա:

4. Բյուջեի 11.01.02.51 բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման /վարչական բյուջեի պահուստային միջոցներ/ 4891 հոդվածից 100 000 /հարյուր հազար/ դրամը տեղափոխել բյուջեի՝ 05.04.01.55 բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման /կենսաբազմազանության և բնության պաշտպանություն/ 4239 հոդվածի վրա:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
| --- | --- | --- | --- |
| Ա.Գրիգորյան | | | |
| Կ.Դավթյան | | | |
| Գ.Դերձյան | | | |
| Գ.Բարեղամյան | | | |
| Ա.Ատոմյան | | | |
| | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա. Աբրահամյան

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*« 11 » հուլիս 2016 թվականի N 15-Ն*

## *ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի և 69-րդ հոդվածի պահանջներով*

*համայնքի ավագանին որոշում է .*

Համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի բյուջեի 2016 թվականի երկրորդ եռամսյակի կատարողականը գնահատել լավ:

| Հ/Հ | ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՊԼԱՆ /հազ.դրամ/ | ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ /հազ.դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 8200.0 | 1833.0 |
| 2 | Գույքահարկ | 4000.0 | 629.7 |
| 3 | Վարձավճարներ | 2400.0 | 128.0 |
| 4 | Ոգելից խմիչքներ | 60.0 | 30.0 |
| 5 | Ծխախոտ | 60.0 | 30.0 |
| 6 | Գազ/բենզին<br>$24^{00}$-ից հետո | 300.0<br>25.0 | 300.0<br>25.0 |
| 7 | Շին. թույլտվություն | 15.0 | 57.5 |
| 8 | Ծնողական վճարներ | 1700.0 | 746.3 |

| Հ/Հ | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀՈԴՎԱԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՊԼԱՆ /հազ.դրամ/ | ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ /հազ.դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Աշխատավարձ | 4111 | 22823.6 | 11431.0 |
| 2 | էլ. էներգիա | 4212 | 850.0 | 308.3 |
| 3 | Կապ | 4214 | 180.0 | 25.4 |
| 4 | Գրենական նյութեր | 4261 | 400.0 | 200.0 |
| 5 | Տրանսպորտային նյութեր | 4264 | 800.0 | 300.0 |
| 6 | Սնունդ և տնտ. ապրանքներ | 4267 | 140.0 | 70.0 |
| 7 | Ֆին աջակցություն | 4729 | 2800.0 | 1034.0 |
| 8 | Հարազատին կորցրած անձինք | 4729 | 700.0 | 290.0 |
| 9 | Մշակութային միջոցառումներ | 4239 | 1000.0 | 361.7 |
| 10 | Նվերներ | 4269 | 800.0 | 212.0 |
| 11 | Արտաքին լուսավորություն | 4212 | 1100.0 | 628.1 |
| 12 | Աղբահանություն | 4213 | 2000.0 | 800.0 |
| 13 | Ֆին. աջակցություն հասարակական կազմակերպություն | 4819 | 200.0 | 100.0 |

| *Համայնքի ավագանու անդամներ* | *Կողմ՝* | *Դեմ՝* | *Ձեռնպահ՝* |
|---|---|---|---|
| Ա.Գրիգորյան | [signature] | | |
| Կ.Դավթյան | [signature] | | |
| Ա.Ատոմյան | [signature] | | |
| Գ.Դերմոյան | [signature] | | |
| Գ.Բարեղամյան | [signature] | | |
| | | | |
| | | | |

*Համայնքի ղեկավար՝* [signature] *Ա. Աբրահամյան*

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

*« 11 » հուլիս 2016 թվականի N 16*

## *ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ ԱՄՍՈՎ /ՕԳՈՍՏՈՍ/ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով*

*համայնքի ավագանին որոշում է.*

Ս/Թ օգոստոս-1-ից մինչև օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածում դադարեցնել "Դվին համայնքի մանկապարտեզ" Համայնքային Ոչ Առևտրային Կազմակերպության աշխատանքները:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *Կողմ՝* | *Դեմ՝* | *Ձեռնպահ՝* |
|---|---|---|---|
| Ա.Գրիգորյան | [signature] | | |
| Ա.Ատոմյան | [signature] | | |
| Կ.Դավթյան | [signature] | | |
| Գ.Դերմոյան | [signature] | | |
| Գ.Բարեղամյան | [signature] | | |
| | | | |
| | | | |

*Համայնքի ղեկավար՝* [signature, stamp] *Ա. Աբրահամյան*

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

*« 11 » հուլիս 2016 թվականի N 17*

*ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ՝ 0.05443 ՀԱ /03-040-0209-0008/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ ոդվածի 27-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-1918-Ն որոշմամբ և հիմք ընդունելով հողերի օգտագործման սխեմաների համաձայնեցման իջզերատեսչական հանձնաժողովի՝ 2016 թվականի հունիսի 8-ի թիվ 35 եզրակացությունը

*համայնքի ավագանին որոշում է.*

. Քաղաքացի Ռազմիկ Տիգրանյանին պատկանող՝ 03-040-0209-0008 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.05443 հա ընդհանուր մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել և դասել բնակավայրերի հողերի կատեգորիայի՝ հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության /տնտեսական ապրանքների առևտրի սրահ/:

. Առաջարկել քաղաքացի Ռազմիկ Տիգրանյանին, հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը եռամսյա ժամկետում մուծելու համայնքի բյուջե:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *Կողմ՝* | *Դեմ՝* | *Ձեռնպահ՝* |
|---|---|---|---|
| Ա.Գրիգորյան | | | |
| Կ.Դավթյան | | | |
| Գ.Դերմոյան | | | |
| Ա.Ատոմյան | | | |
| Գ.Բարեղամյան | | | |
| | | | |
| | | | |

*Համայնքի ղեկավար՝* *Ա. Աբրահամյան*

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դվին համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դվին, +(374)235 6-00-67, Dvingp@inbox.ru dvin.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*« 11 » հուլիս 2016 թվականի N 18-Ն*

ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ" ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ԿՐՃԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ 24 ՀՈՒՆԻՍԻ ԹԻՎ 12 ՈՐՈՇՈՒՄ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ, 32-րդ հոդվածի 5-րդ կետերով, " Իրավական ակտերի մասին " Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության "Աշխատանքային օրենսգրքի" 115-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2016 թվականի հունիսի 28-ի թիվ 1/14/3616-16 գրությունը և Դվին համայնքի մանկապարտեզի տնօրեն Զ. Հակոբյանի դիմումը՝ մանկապարտեզում լվացքը կազմակերպելու համար բավարար պայմաններ չլինելու մասին, որը բազմաթիվ անգամներ է մատնանշվել ստուգումների արդյունքում: Այդ պատճառով ծնողները իրենք են իրենց երեխաների իրերը լվանում: Նշյալ հանգամանքը առաջ է բերում ծնողների դժգոհության, ինչպես նաև համայնքի բյուջեից ավելորդ ծախսերի, քանի որ մանկապարտեզի հաստիքացուցակում առկա է լվացքարար հաստիքը, որը իր նպատակին չի ծառայում*

*համայնքի ավագանին որոշում է.*

1. "Դվին համայնքի մանկապարտեզ" Համայնքային Ոչ Առևտրային Կազմակերպությունում կրճատել հաստիքային 1 միավոր՝ լվացքարար :
2. Չեղյալ ճանաչել համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 24-ի թիվ 12 որոշումը:
3. Սույն որոշման 1-ին կետը ուժի մեջ է մտնում որոշումը հաստատելուց՝ երկու ամիս հետո:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *Կողմ՝* | *Դեմ՝* | *Ձեռնպահ՝* |
|---|---|---|---|
| Ա.Գրիգորյան | [signature] | | |
| Կ.Դավթյան | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| ..Ատոյան | | | |
| Գ.Դերմոյան | - | | |
| Գ.Բարեղամյան | | | |
| | | | |
| | | | |

*Համայնքի ղեկավար՝* *Ա. Աբրահամյան*